ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«15» հունվար 2026 թ. № 665-Լ

ՀՐԱՄԱՆ

ԱԱՀ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ԵՎ ՈՐՊԵՍ ԱԱՀ ՎՃԱՐՈՂ ՀԱՇՎԱՌՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի մայիսի 6-ի ՀՕ-234-Ն օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու հնարավորություն տալու մասին դիմումի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ստորագրող
ՎՐԵԺ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՎՐԵԺ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2026թ. հունիսի 15-ի N 665-Լ հրամանի

ԴԻՄՈՒՄ ԱԱՀ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ԵՎ ՈՐՊԵՍ ԱԱՀ ՎՃԱՐՈՂ ՀԱՇՎԱՌՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ	Փաստաթղթի հերթական համարը _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)							
1. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)								
2. Հարկ վճարողի անվանումը								
3. Հարկ վճարողի գտնվելու վայրը								
4. Հարկ վճարողի հեռախոսահամարը								

5. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 293-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ կամ 2-րդ մասի 2-րդ կետերին համապատասխան ԱԱՀ վճարող համարվելու համար խնդրում եմ հնարավորություն տալ ներկայացնելու ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն _____ տարվա համար:

Տեղյակ եմ, որ՝

1) դիմումը պետք է ներկայացվի մինչև 2026 թվականի դեկտեմբերի 21-ը ներառյալ,

2) դիմումը ներկայացվում է թղթային կրիչով կամ էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով (e-request.am),

3) դիմումը ներկայացնելուց հետո՝ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ բացառապես էլեկտրոնային եղանակով պետք է ներկայացվի ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հունիսի 27-ի N190-Ն հրամանով սահմանված ձևով՝ լրացնելով հայտարարության 2-րդ կետի համապատասխան ենթակետը,

4) դիմումի 5-րդ կետում մեկից ավելի տարեթիվ լրացված լինելու դեպքում ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարությունը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա համար:

Պաշտոնատար անձ _____

(ստորագրությունը, անունը, ազգանունը)